**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«14» 08 2025թ.** **ՆՄՈ/796-Ա**

ք. Արմավիր

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի օգոստոսի 14-ի ՆԴԽ/16.1/27950-2025 հանձնարարականը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի բնակիչ Կարինե Բաղդասարյանի կողմից ներկայացված դիմումում բարձրացված հարցերի ուսումնասիրություն իրականացնելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Գ. Հովհաննիսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի վարչական ղեկավարին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման ներկայացուցչին (համաձայնությամբ):
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Գ. Հովհաննիսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մեկօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալի պաշտոնակատար, մարզպետին փոխարինող Բ. Նիկողոսյանին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ՝ Ա. Համբարձումյան)՝ սույն

որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,**

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

Восстановимая подпись

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

X

Подписано: NIKOGHOSYAN BARSEGH 2808860099 **Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**

**Հավելված**
**Հայաստանի Հանրապետության**
**Արմավիրի մարզպետի**
**2025 թվականի օգոստոսի 14-ի**
**ՆՄՌ/796-Ա որոշման**

**Կազմ**
**աշխատանքային խմբի**

**Աշխատանքային խմբի ղեկավար՝**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ՝ Գոռ Հովհաննիսյան.

**Աշխատանքային խմբի անդամներ՝**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ՝ Լիաննա Հարությունյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝ Արշակ Ղորղանյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ՝ Արման Բեգլարյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ Միհրան Մանուկյան:

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023